ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿ

1981 թ. սեպտեմբերի 14-ին իր մահկանացուն կնքեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Հայկական և Վրացական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտություններին դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Սևակը։ Դա ծանր կորուստ էր հայագիտության համար։ Գուրգեն Սևակը կարկառուն դեմք էր ժամանակակից հայ լեզվաբանության մեջ. նա իր ամբողջ գիտակցական կյանքը, գործունեությունը նվիրաբերեց մեր լեզվի ուսումնասիրման, ուսուցման, մշակման, անաղարտության պահպանման վեհ գործին։ Երբեմնի բանվորի դավակը, օժտված լինելով մեծ ընդունակություններով, անձնուրաց ու նպատակասլաց աշխատանքով հասել էր գիտության բարձունքներին և իր գործով ու անձնական օրինակով հակայական հեղինակություն էր վայելում։

Գուրգեն Գրիգորի Սևակը ծնվել է 1904 թ. ապրիլի 15-ին Թբիլիսիում։ 1924 թ. ավարտելով տեղի Ներսիսյան դպրոցը՝ տեղափոխվել է Երևան և ընդունվել պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, որի լրիվ դասընթացն ավարտել է 1928 թ.։ 1929—1932 թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում։ Նա բախտ է ունեցել լսելու գիտության այնպիսի մեծ երախտավորների դասախոսությունները, որպիսիք էին Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ա. Տերտերյանը, Հ. Մանանդյանը, Գ. Ղափանցյանը և ուրիշներ։ Անցնելով հայագիտական դասական դպրոցի բովով՝ պատրաստվել է գիտական-մանկավարժական ու հասարակական լայն գործունեության։

Նրա աշխատանքային գործունեությունն սկսվել է դեռ ասպիրանտուրայի ուսումնառության շրջանից։ 1931 թ. դասախոսել է Երևանի համալսարանում՝ վարելով ժամանակակից հայոց լեզվի տեսության, ոճաբանության, աշխարհաբար գրական լեզվի պատմության, այլև վրացերենի դասընթացներ։ 1941—1971 թթ. ղեկավարել է հայոց լեզվի ամբիոնը։ Նրա աշխատանքը համալսարանում տևել է մինչև 1979 թ.։ Նա միաժամանակ տարբեր տարիներում դասախոսել է Երևանի Խ. Աբովյանի անվան, Լենինականի Մ. Նալբանդյանի անվան, Թբիլիսիի, Բաքվի մանկավարժական ինստիտուտնե-

րում։ Նրան լսել են հազարավոր ուսանողներ, հմայվել նրա հստակ, խիստ տրամաբանված ու կուռ խոսքով, բարձր որակավորում ստացել՝ գործելու մանկավարժական, գիտական, ինչպես և հասարակական ասպարեզներում։ Նա ղեկավարել է մի քանի տասնյակ ասպիրանտների։ Նրա աշակերտների մեջ կան գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, վաստակավոր ուսուցիչներ, գրողներ և այլն։

Գուրգեն Սևակի աշխատանքային գործունեությունը սերտորեն կապված է եղել նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ։ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում նրա հիմնադրման ժամանակից մինչև 1951 թ. պաշտոնավարել է իբրև ավագ գիտական աշխատող, ապա՝ նաև ժամանակակից հայոց լեզվի բաժնի վարիչ։ Վերջին տարիներս ղեկավարում

էր նույն ինստիտուտի խոսքի մշակույթի և տերմինաբանության բաժինը։ 1969 թ. ակադեմիայի նախագահությանն առընթեր գիտատեխնիկական տերմինաբանության խորհրդի նախագահն էր։

Լայն են եղել տաղանդավոր գիտնականի գիտական հետաքրքրությունների սահմանները։ Առանձնապես նշանակալից է նրա ներդրումը մեզանում լեզվաբանական տեսական հարցերի մշակման և ժամանակակից հայերենի կառուցվածքի ու պատմության հետազոտման բնագավառում։ Այդ տեսակետից գիտական անուրանալի արժեքով աչքի են ընկնում նրա «Խոսքի մասերի ուսմունքը» (1939 թ.), «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» (1939 թ.), «Ժամանակակից հայոց լեզվի համառոտ պատմություն» (1948 թ.) աշխատությունները։ Ժամանակի լեզվաբանական գիտության ամենաբարձր մակարդակով նա ստեղծեց խոսքի մասերի նորագույն ուսմունք՝ լեզվի ու խոսքի հստակ տարբերակման հիման վրա, որն իր խոր ազդեցությունը թողեց հետագա տարիների հայ քերականագիտական ուսումնասիրությունների վրա։ Դա տեսական հաստատուն ուղենիշ եղավ բազմաթիվ երիտասարդ գիտական աշխատողների համար։ Հայ լեզվաբանության մեջ այդ խոշոր գիտնականի անվան հետ մեծ չափով կապվում է և լեզվական առանձին կառուցվածքային միավորների, ինչպես օրինակ, հնչույթի և ձևույթի գիտական բնութագրումը։ Ժամանակակից հայոց լեզվի տեսության ասպարեզում քննադատաբար օգտվելով մեծ հայագետ Մ. Աբեղյանի գիտական վիթխարի վաստակից՝ Գուրգեն Սևակը հանդես եկավ տեսական նոր ընդհանրացումներով։ Իր «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» գիրքը նա հետագա տարիներին կատարած ուսումնասիրություններով լրացրեց ու 1955 թ. վերահրատարակեց։ Այս գիրքը մինչև օրս հաջողությամբ ծառայում է որպես ձեռնարկ մեր բարձրագույն դպրոցների ուսանողության համար։ Այստեղ սեղմ, բայց խիստ հետևողական ու կուռ շարադրանքով ներկայացվում են ժամանակակից գրական հայերենի հնչյունային կազմի, բառապաշարի, բառակազմության ու ձևաբանության բնորոշ իրողությունների գիտական բնութագրումները։ Հատկանշական է, որ լեզվական յուրաքանչյուր երևույթ շոշափվում է ոչ թե սոսկ նկարագրմամբ, այլ լեզվաբանական գիտության ժամանակի տեսական նվաճումների լույսի տակ։

«Ժամանակակից հայոց լեզվի համառոտ պատմությունը» գրական աշխարհաբարի գիտական պատմության ստեղծման կարևոր փորձ էր, որտեղ Գուրգեն Սևակը շրջանաբաժանում կատարեց և տվեց պատմական առանձին դրվագների նկարագիրը։

Սևակին լայն ճանաչում ու մեծ համբավ բերեց իր հեղինակած «Հայոց լեզվի շարահյուսություն» դասագիրքը, որը, առաջին անգամ լույս տեսնելով 1936 թ. և բազմիցս վերահրատարակվելով, հսկայական դեր կատարեց դպրոցում հայոց լեզվի ուսուցման մեջ։ Այն ունի օրինակելի համակարգվածություն և նյութի ներկայացման գովելի եղանակներ։

Գուրգեն Սևակը գործուն հետաքրքրությամբ ու ակտիվ միջամտությամբ էր հետևում մեր ժամանակակից գրական լեզվի կիրառման կենդանի ընթացքին։ Բազմաթիվ հոդվածներով անդրադարձել է նրա մշակման, հարստացման, ոճի կատարելագործման հարցերին։

Լեզվաշինարար գիտնականը թե՛ գրավոր խոսքով և թե՛ բանավոր շատ ելույթներով առաջ է քաշել մեր լեզվի նորմավորման ու տերմինաշինության էական հարցերը։ Նա իր գործունեության սկզբից մինչև կյանքի վերջը հանրապետության տերմինաբանական կոմիտեի անդամ էր (1932—1940 թթ.՝ նաև նրա գիտնական քարտուղարը) և իր արժեքավոր առաջարկներով շատ օգտակար դեր խաղաց կոմիտեի աշխատանքներում։

Գուրգեն Սևակը աշխարհի նշանավոր էսպերանտիստներից մեկն էր։ Դեռ 1930 թ. նա հրատարակել է էսպերանտո լեզվի համառոտ ձեռնարկ։ Հայերենից թարգմանություններ է կատարել այդ լեզվով և այդ ճանապարհով աշխարհին ճանաչել տվել մեր գրականության դասական նմուշներից։ Զբաղվել է այդ լեզվի ուսուցմամբ ու տարածմամբ։ Մասնակցել է էսպերանտիստների միջազգային գիտաժողովներին ու համաժողովներին։ Նա էսպերանտիստների միջազգային ակադեմիայի անդամ էր։

Գուրգեն Սևակը նաև թարգմանիչ էր։ Հիշատակության արժանի է Պուշկինի «Եվգենի Օնեգին» չափածո վեպի նրա հայերեն թարգմանությունը։ Նա զբաղվել է հայ մշակույթի պատմության հարցերով։ Կարևոր են նրա աշխատությունները Մեսրոպ Մաշտոցի և հայ գրերի գյուտի վերաբերյալ։

Գուրգեն Սևակը սկզբունքային, համոզմունքներով անզիջում գիտնական էր։ Որպես քաղաքացի բարձր էր, հայրենասեր, ազնիվ ու անաշառ։ Ահա թե ինչու նրա հիշատակը երկար ու վառ կմնա մեր հասարակայնության մեջ։

Պրոֆ. Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ